Արձանագրություն N 4
ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-22/16 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
«Շինարարական ապրանքների և պարագաների»

ք. Երևան

6 հուլիսի 2022թ
ժամը 11:00

Մասնակցում էին՝
նախագահ՝ Գևորգ Հարությունյան
անդամներ՝ Գևորգ Բաբայան
Անահիտ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

1. **ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-22/16 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման և աճուրդի արդյունքների ամփոփման մասին**

(Գ.Հարությունյան)

Ընդունել ի գիտություն, որ

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է համապատասխան նմուշները:

Ներկայացված փաստաթղթերի և նմուշների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրեց

1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ բացառությամբ
   - ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, որի հայտում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հավելվածը կցված չէ:
2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-22/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին՝ բացառությամբ
   - ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, որի հայտում դիմում-հայտարարությունում (հավելված 1) ընթացակարգի մասնակցության համար չափաբաժինները նշված չեն:
   - Մեծ Ծիածան ՍՊԸ-ի կողմից 33-րդ և 34-րդ չափաբաժինների համար ներկայացված նմուշները չեն համապատասխանում իր կողմից ներկայացված և հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին (լինոլեումի հաստությունը հիմքով նախատեսված է 4-5մմ, իսկ նմուշի հաստությունը եղել է 2.5մմ):
   - Էքստերիեր Գրուպ ՍՊԸ-ի կողմից 25-րդ և 27-րդ չափաբաժինների համար ներկայացված նմուշների ապրանքային նշանը և արտադրողը չեն համապատասխանում տեխնիկական բնութագրում նշվածների հետ:
   - Նարգար ՍՊԸ-ի կողմից 84-րդ չափաբաժնի համար ներկայացված նմուշի ապրանքային նշանը և արտաղրողը չեն համապատասխանում տեխնիկական բնութագրում նշվածների հետ:
   - Ջոլի ֆեմիլի ՍՊԸ-ի կողմից 26-րդ չափաբաժնի համար տեխնիկական բնութագրում առկա է «կամ համարժեք» բառերը:

Հիմք ընդունելով վերոնշյալը գնահատող հանձնաժողովը որոշեց

- Հիմք ընդունելով ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-22/16 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետը մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգում շտկել հետևյալ անճշտությունները՝

1) <u>ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն</u>

դիմում-հայտարարությունում լրացնել ընթացակարգին մասնակցության չափաբաժինների համարները և կցել իրական շահառուի համապատասխան հավելվածը:

2) <u>Մեծ Ծիածան ՍՊԸ-ն</u>

33-րդ և 34-րդ չափաբաժինների համար առաջարկել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանք:

3) <u>Էքստերիեր Գրուպ ՍՊԸ-ն</u>

25-րդ և 27-րդ չափաբաժինների ապրանքային նշան և արտադրող սյունակները լրացնել համաձայն ներկայացված նմուշի (Կնաուֆ):

4) <u>Նարգար ՍՊԸ-ն</u>

84-րդ չափաբաժնի ապրանքային նշան և արտադրող սյունակները լրացնել համաձայն ներկայացված նմուշի:

5) <u>Ջոլի Ֆեմիլի ՍՊԸ-ն</u>

26-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրից հանել «կամ համարժեք» բառերը:

➢ Նիստը վերսկսել շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին (ք. Երևան, Տերյան 105, 3211 սենյակ հասցեում):

Հանձնաժողովի

նախագահ Գևորգ Հարությունյան

Անդամներ Գևորգ Բաբայան

Անահիտ Կարապետյան

Քարտուղար Լուսինե Ավետիսյան